

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Հրապարակված է 13.10.2023թ.
Ամփոփագրում նշված պայմանները
կարող են փոփոխված լինել
Հեռ. (+374 10) 510 510, www.incobank.am

Բանկային ծառայությունների Բիզնես հաճախորդների համար**Բանկային ընթացիկ հաշվի սակագներ**

Ծառայություն	Սակագին
Հաճախորդի խումբ	հրավաքանական անձ/անհատ ձեռնարկատեր/նոտար
Հաշվի արժույթ ¹	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի

¹ ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի արժույթներից բացի այլ արժույթներով հաշիվների՝ Բանկի մասնաճյուղերում և Կենտրոնական գրասենյակում բացելու դեպքում, սահմանված է 1000 ՀՀ դրամ սակագին՝ յուրաքանչյուրը:

Հաշվի բացման միանվագ վճար <i>(վճարվում/գանձվում է հաշվի բացման պահին)</i>	<ul style="list-style-type: none">• 5,000 ՀՀ դրամ• Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց/ոչ ռեզիդենտ մասնակից ունեցող իրավաբանական անձանց և օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անհատ ձեռնարկատերերի համար² -50,000 ՀՀ դրամ
Հաշվի ամսական սպասարկման վճար³	500 ՀՀ դրամ

² Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց/ոչ ռեզիդենտ մասնակից ունեցող իրավաբանական անձանց և օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անհատ ձեռնարկատերերի համար բանկային հաշվի բացումը իրականացվում է միայն սույն սակագներով սահմանված փաթեթային տարբերակով սպասարկման տարբերակն ընտրելու դեպքում:

³ Փաթեթի ամսական սպասարկման վճար գանձելու դեպքում հաշվի ամսական սպասարկման վճար չի գանձվում:

Փաթեթի ամսական սպասարկման վճար⁴	3,000 ՀՀ դրամ
Հաշվի բացման համար անհրաժեշտ մուտքագրվող նվազագույն գումար	<ul style="list-style-type: none"> • 0 ՀՀ դրամ • Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց/ոչ ռեզիդենտ մասնակից ունեցող իրավաբանական անձանց և օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անհատ ձեռնարկատերերի համար-100,000 ՀՀ դրամ
Հաշվի փակում	Անվճար
Հաշվի նվազագույն մնացորդ	<ul style="list-style-type: none"> • չի սահմանվում • Ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց/ոչ ռեզիդենտ մասնակից ունեցող իրավաբանական անձանց և օտարերկրյա քաղաքացիություն ունեցող անհատ ձեռնարկատերերի համար-100,000 ՀՀ դրամ⁵

⁴ Փաթեթի շրջանակում Հաճախորդին տրամադրվում է մեկ դեբետային կամ վարկային քարտ և ԻնտելոՕնլայն Էլեկտրոնային համակարգ: Փաթեթի շրջանակում դեբետային կամ վարկային քարտի համար ամսական սպասարկման վճար չի գանձվում, իսկ քարտի տրամադրման և սպասարկման այլ պայմանները կարգավորվում են համաձայն «Բիզնես վճարային քարտերի և վարկային գծի տրամադրման և սպասարկման պայմաններ և սակագներ» փաստաթղթի: Լրացուցիչ քարտերը տրամադրվում են համաձայն վերոնշյալ փաստաթղթի: Փաթեթի շրջանակում սույն սակագներով սահմանված՝ *Հաշվի սպասարկման լրացուցիչ վճար Ինտելո Օնլայն համակարգին միանալու դեպքում* սակագինը ևս չի կիրառվում:

⁵ Բանկային հաշիվը հաճախորդի նախաձեռնությամբ հաշիվը բացելուց հետո 181 օրվա ընթացքում փակելու դեպքում հաշվի նվազագույն մնացորդը չի վերադարձվում:

Հաշվի միջին օրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան պարզ տոկոսադրույք	չի սահմանվում
--	---------------

Փոխանցումներ ընթացիկ հաշվից

Ճառայություն	Սակագին
Ներբանկային փոխանցումներ	500 ՀՀ դրամ* յուրաքանչյուր փոխանցման համար
Միջբանկային և բյուջե փոխանցումներ ՀՀ դրամով	*Անվճար հեռակառավարման համակարգերով ստացված հանձնարարականների համար

Միջբանկային փոխանցումներ թղթային հանձնարարական (BEN) բացի ՌԴ ռուբլուց	5,000 ՀՀ դրամ ⁶
Միջբանկային փոխանցումներ թղթային հանձնարարական (OUR)⁷	<ul style="list-style-type: none"> ❖ ՌԴ ռուբլի՝ 0.1% նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը 40,000 ՀՀ դրամ ❖ ԱՄՆ դոլար՝ 0.15% նվազագույնը 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ ❖ Եվրո և այլ արտարժույթ⁸ 0.15% նվազագույնը 9,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ
Միջբանկային փոխանցումներ արտարժույթով՝ ՀՀ տարածքում (Թղթային եղանակով ներկայացված հանձնարարական)	<ul style="list-style-type: none"> ❖ 0.1% նվազագույնը 5,000 ՀՀ դրամ, առավելագույնը 10,000 ՀՀ դրամ

⁶ Փոխանցման ծախսերը շահառուի հաշվին լինելու դեպքում:

⁷ Guaranteed OUR տարբերակն ընտրելու դեպքում լրացուցիչ գանձվում է 12,000 ՀՀ դրամ: Սակագինը ներառում է առանց նվազեցումների գումարը ստացողի հաշվին հասցնելու ծախսերը: RUB և JPY(ճապոնական իենով) փոխանցումների դեպքում Guaranteed OUR տարբերակը կիրառելի չէ. երրորդ բանկերի ծախսերը, առկայության դեպքում, գանձվում են հաճախորդից՝ լրացուցիչ:

⁸ JPY՝ ճապոնական իենով փոխանցումների դեպքում սակագինը կազմում է 0.15% նվազագույնը 15,000 ՀՀ դրամ, առավելագույնը 60,000 ՀՀ դրամ:

<p>Միջբանկային «Շտապ» փոխանցումներ թղթային հանձնարարական (նույն գործառնական օրվա ընթացքում)</p>	<ul style="list-style-type: none"> ❖ ՀՀ դրամ` 2,000 ՀՀ դրամ լրացուցիչ միանվագ վճար ❖ Արտարժույթ` 5,000 ՀՀ դրամ լրացուցիչ միանվագ վճար
<p>Հեռակառավարման համակարգերով ստացված միջբանկային հանձնարարականներ</p>	<p>Թղթային հանձնարարականների սակագների նկատմամբ 20% ցածր սակագին</p> <p>(այդ թվում Guaranteed OUR, BEN փոխանցումների, ՀՀ տարածքում արտարժույթով միջբանկային փոխանցումների և «Շտապ» փոխանցումների համար)</p>
<p>Վճարման հանձնարարականի կատարման վերաբերյալ հարցման ներկայացում, պայմանների փոփոխում կամ չեղյալացում</p>	<ul style="list-style-type: none"> ❖ 1,500 ՀՀ դրամ` ՀՀ դրամի դեպքում ❖ 6,000 դրամ` ՌԴ ռուբլու դեպքում ❖ 30,000 ՀՀ դրամ` ԱՄՆ դոլարի և Եվրոյի և այլ արտարժույթի դեպքում

Հաշիվների սպասարկում հեռակառավարման համակարգերով և պարբերական վճարումների հանձնարարականով

Ճառայություն	Սակագին
Հաշվի սպասարկման լրացուցիչ վճար Ինեկո Օնլայն համակարգին միանալու դեպքում ⁹	<ul style="list-style-type: none"> ❖ Ամսական 2,000 ՀՀ դրամ¹⁰ ❖ Դիտարկման ռեժիմի դեպքում՝ անվճար
Հաշվի սպասարկում պարբերական վճարումների հանձնարարականով	Անվճար

Հաշիվների քաղվածքների և տեղեկանքների տրամադրում

Ճառայություն	Սակագին
--------------	---------

⁹ԻնեկոՕնլայն համակարգով հաշվի՝ անվտանգության սարքով սպասարկման դեպքում գանձվում է 10,000 ՀՀ դրամ հաշվի սպասարկման միանվագ վճար յուրաքանչյուր օգտագործողի համար: Վճարը կիրառվում է յուրաքանչյուր առանձին սարքի տրամադրման համար: Այն դեպքում, երբ տվյալ օգտագործողն արդեն գրանցված է որպես ֆիզիկական անձի և/կամ իրավաբանական անձի/ԱԶ-ի անունից անվտանգության սարքով ԻնեկոՕնլայն էլեկտրոնային համակարգի օգտագործող, ապա միևնույն անվտանգության սարքը կարող է օգտագործել նաև իր հաշիվներով կատարվող գործարքների հաստատման համար: Այս դեպքում անվտանգության սարքով հաշվի սպասարկման միանվագ վճար լրացուցիչ չի կիրառվում: Վերոնշյալ միանվագ սակագինը կազմում է 0 ՀՀ դրամ: Անվտանգության սարքի վնասման կամ կորստի դեպքում Բանկն իրավունք ունի Հաճախորդից գանձել տուգանք 10,000 ՀՀ դրամի չափով:

¹⁰ Փաթեթի ամսական սպասարկման վճար գանձելու դեպքում Ինեկո Օնլայն համակարգի ամսական սպասարկման վճար չի գանձվում:

Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում և Էլ. փոստով	Անվճար
Հաշվի քաղվածքի տրամադրում Փոստով (ամսական)	2,000 ՀՀ դրամ + փոստային առաքման ծախսերը
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում¹¹	<ul style="list-style-type: none"> ✦ մինչև 1 տարվա վաղեմության՝ 1,000 ՀՀ դրամ ✦ 1 տարուց ավել վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ
Տեղեկանքների և տեղեկատվության տրամադրում (առավելագույնը 3 տարի վաղեմությամբ)	<ul style="list-style-type: none"> • Բանկային հաշվի վերաբերյալ և SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում - 3,000 ՀՀ դրամ¹² • Գործարքների մանրամասների վերաբերյալ¹³- 5,000 ՀՀ դրամ • Վարկերի և այլ ֆինանսավորման գործիքների վերաբերյալ¹⁴- 5,000 ՀՀ դրամ • Աուդիտորական հարցման պատասխան, վարկերի և այլ ֆինանսավորման գործիքների ապահովության և այլ տիպի և/կամ վաղեմության տեղեկատվության տրամադրում – 10,000 ՀՀ դրամ

¹¹ Փոստային առաքման դեպքում լրացուցիչ կգանձվի փոստային առաքման ծախսը:

¹² SWIFT հաղորդագրության պատճենը Ինեկո Օնլայն համակարգի միջոցով տրամադրվում է անվճար:

¹³ 10 գործարքից ավել տեղեկատվության համար կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

¹⁴ 2 և ավելի պայմանագրերի գծով տեղեկատվություն ներառելու դեպքում կիրառվում է «Այլ տիպի» տեղեկանքների համար սահմանված սակագինը:

Դրամարկղային գործառնություններ

Ճառայություն	Սակագին
Կանխիկ գումարի մուտքագրում Հաշվին	<ul style="list-style-type: none"> ✦ 33 դրամի, ԱՄՆ դոլարի¹⁵, Եվրոյի¹⁶ համար անվճար ✦ ՌԴ ռուբլով վարկի մարման նպատակով մուտքագրվող գումարների համար սակագինը 0 33 դրամ Է, մնացած դեպքերի համար` 2%

¹⁵ Մինչև 2004թ. թողարկված 5,10,20,50 ԱՄՆ դոլար և մինչև 2009թ. թողարկված 100 ԱՄՆ դոլար անվանական արժեքով թղթադրամներ ընդունվում են 1% միջնորդավճարով, սակայն մեկ օրվա ընթացքում մեկ հաճախորդի կողմից մինչև 1,000 ԱՄՆ դոլար թղթադրամի մուտքագրումն անվճար է:

¹⁶ 500 Եվրո անվանական արժեքով թղթադրամների ընդունումը իրականացվում է միայն Կոմիտաս 54բ հասցեում գտնվող մասնաճյուղում: 500 Եվրո անվանական արժեքով թղթադրամները բոլոր դեպքերում ընդունվում են 1% միջնորդավճարով:

Կանխիկ գումարի ելքագրում Հաշվից

- ՀՀ դրամ՝ 0.2%, բայց ոչ պակաս քան 500 ՀՀ դրամ*
- ԱՄՆ դոլար՝ 1%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ*
- Եվրո՝ 1%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ*
- ՌԴ ռուբլի՝ 0.5%, բայց ոչ պակաս քան 2 000 ՀՀ դրամ*

*Սակագինը չի կիրառվում հետևյալ դեպքերում՝

- Նախորդ օրացուցային և ընթացիկ տարվա ընթացքում կանխիկով մուտքագրված (բացառությամբ քարտային հաշիվներին) գումարների կանխիկացման դեպքում, եթե գումարը կանխիկացվում է այն արժույթով, որով մուտքագրվել է,
- POS տերմինալների և Ինեկոփեյ համակարգի միջոցով ստացված հասույթների գումարների կանխիկացման դեպքում,
- Ավանդի/պարտատոմսի դիմում/պայմանագրի ժամկետը

	<p>լրանալուց հետո ավանդի/պարտատոմսի գումարի վերադարձման դեպքում, եթե ավանդի պայմանագրային ժամկետը մեծ է 3 ամսից, կամ եթե ավանդի պայմանագրի կնքման օրվանից մինչև պայմանագրի վաղաժամկետ դադարեցումն ընկած ժամանակահատվածը պակաս չէ 3 ամսից:</p> <ul style="list-style-type: none"> • Բանկի կողմից մատուցվող այլ ծառայությունների պայմաններով նախատեսված դեպքերում:
ԱՄՆ դոլարի, Եվրոյի, ՌԴ ռուբլու հնամաշ թղթադրամների և մինչև 1996 թվականը թողարկված ԱՄՆ դոլարի թղթադրամների փոխանակում	5%, եթե Բանկը համարում է, որ թղթադրամը փոխանակման ենթակա է
Հնամաշ ՀՀ դրամի թղթադրամների փոխանակում	Անվճար
Կանխիկ միջոցների հաշվարկ, ստուգում և փաթեթավորում	10 ՀՀ դրամ յուրաքանչյուր թղթադրամի համար, նվազագույնը 1,000 ՀՀ դրամ

500 եվրո անվանական արժեքով թղթադրամների փոխանակում այլ թղթադրամներով կամ փոխարկում այլ արժույթի¹⁷	1%
Չեկային գրքույկի տրամադրում (50 էջ)	առաջինը՝ անվճար, յուրաքանչյուր հաջորդը՝ 2,500 ՀՀ դրամ
Չեկային գրքույկի չեղարկում	Անվճար

Եսքրոու հատուկ հաշվի սակագներ

Ծառայություն	Սակագին
Հաշվի նկարագիր	Եսքրոու հաշիվը հատուկ բանկային հաշիվ է, որի վրա դեպոզիտները են ապրանքի, ծառայության, անշարժ գույքի ձեռքբերման կամ այլ տեսակի գործարքների միջոցները՝ որպես գործարքի կատարման երաշխիք: Գումարը հասանելի է դառնում միայն պայմանագրով պահանջվող փաստաթղթերը Բանկ ներկայացման դեպքում:
Եսքրոու հաշվի արժույթ	արժույթը պայմանավորված է գործարքի արժույթով
Եսքրոու հաշվի բացում¹⁸	0.2% գործարքի գումարից, Նվազագույնը՝ 30,000 ՀՀ դրամ

¹⁷ Ծառայությունը մատուցվում է միայն Կոմիտաս 54բ հասցեում գտնվող մասնաճյուղում:

¹⁸ Որոշ դեպքերում Բանկի որոշմամբ կարող է կիրառվել սույն սակագներից տարբերվող վճար:

	Առավելագույնը՝ 300,000 ՀՀ դրամ
Գործարքի պայմանների փոփոխության վճար	20,000 ՀՀ դրամ
Եսքրոու գումարի կանխիկացում	անվճար
Եսքրոու հաշվին դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	0%
Եսքրոու Հաշվի փակում	Անվճար, գործարքի իրականացումից անմիջապես հետո

Կառուցապատողի հատուկ հաշվի սակագներ

Ճառայություն	Սակագին
Հաճախորդի խումբ	Բանկում ընթացիկ հաշիվ ունեցող իրավաբանական անձ/անհատ ձեռնարկատեր
Հաշվի նկարագիր	Կառուցապատողի հատուկ հաշիվը նախատեսված է Գնորդների հետ կնքված Գնման իրավունքի պայմանագրերի հիման վրա կառուցվող շենքում բնակարանների և ոչ բնակելի տարածքների, անհատական բնակելի տների ձեռքբերման նպատակով Գնորդների կողմից կատարվող կանխավճարների և ձեռքբերմանն ուղղված այլ վճարների ստացման համար, ընդ որում կառուցապատողի կողմից կառուցվող յուրաքանչյուր շենքի համար բացվում է առանձին Հատուկ հաշիվ:

	Կառուցապատողի հատուկ հաշվին մուտքագրվող բոլոր դրամական միջոցները Բանկի կողմից արգելադրվում են և հասանելի չեն Կառուցապատողին օգտագործման համար բացառությամբ Կառուցապատողի հատուկ հաշվի պայմանագրով, Գնման իրավունքի պայմանագրով և օրենքով սահմանված դեպքերի:
Հաշվի արժույթ	ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի
Հաշվի բացում¹⁹	50,000 ՀՀ դրամ
Հաշվի ամսական սպասարկման վճար	5,000 ՀՀ դրամ
Հաշվից գումարի ելքագրում	Փոխանցում հաճախորդի Ինտերբանկում գործող ընթացիկ հաշիվներին
Հաշվին դրական մնացորդի նկատմամբ հաշվարկվող տարեկան տոկոսադրույք	<ul style="list-style-type: none"> ❖ ՀՀ դրամի համար – Պայմանագրային* ❖ ԱՄՆ դոլար – 0.0% ❖ Եվրո – 0.0% ❖ Ռուբլի - 0.0% <p><i>*Շինթույլտվությամբ սահմանված կառուցապատման ավարտի պահից 6 ամիսը լրանալուց հետո, հաշվի դրական մնացորդի նկատմամբ տարեկան տոկոսադրույք այլևս չի հաշվարկվում:</i></p>
Տոկոսների վճարման պարբերականություն	<ul style="list-style-type: none"> ❖ Եռամսյակային ❖ Տարեկան
Հաշվից քաղվածքների/տեղեկանքների տրամադրում	
Հաշվի քաղվածքի տրամադրում Բանկում և	Անվճար

¹⁹ Մինևոյն արժույթով յուրաքանչյուր երկրորդ և դրան հաջորդող հաշվի բացման համար սահմանվում է հաշվի բացման սակագին՝ 50,000 ՀՀ դրամի չափով:

Էլ. Փոստով	
Հաշվի քաղվածքի կրկնօրինակի տրամադրում	մինչև 1 տարվա վաղեմության՝ 3,000 ՀՀ դրամ
	1 տարուց ավել վաղեմության՝ 5,000 ՀՀ դրամ
Տեղեկանքների տրամադրում	🚩 5,000 ՀՀ դրամ
Առևտրի նպատակով հաշվի վերաբերյալ տեղեկությունների տրամադրում	10,000 ՀՀ դրամ

Ընդհանուր դրույթներ Բանկային հաշվի բոլոր տեսակների համար

1. Սույն Սակագները և «Ինեկոբանկ» ՓԲԸ Տնօրինության կողմից հաստատված «Բանկային սպասարկման հիմնական պայմաններ»-ը (այսուհետ՝ Հիմնական պայմաններ) միասին հանդիսանում են Ինեկոբանկ ՓԲԸ Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի բանկային հաշվի ծառայության միասնական տեղեկատվական ամփոփագիր և հանդիսանում են Բանկային ծառայությունների տրամադրման դիմում/պայմանագրի անբաժանելի մասը: Օգտագործվող հասկացություններն ունեն նույն իմաստը, ինչ Հիմնական պայմաններում:
2. Սույն փաստաթղթով սահմանված բանկային հաշիվները բացվում են անժամկետ (բացառությամբ Էսթրոու հաշվի, որոնք փակվում են գործարքի իրականացումից անմիջապես հետո):
3. ՀՀ դրամով ընթացիկ հաշվի բացման դեպքում Բանկը Հաճախորդի համար միաժամանակ բացում է ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի արժույթներով ընթացիկ հաշիվներ՝ առանց վերջիններիս համար բացման և սպասարկման լրացուցիչ վճարներ գանձելու:
4. ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, Եվրո, ՌԴ ռուբլի արժույթներից բացի այլ արժույթներով հաշիվների բացումն ու սպասարկումը ինչպես նաև առանց բանկային հաշիվ բացելու՝ սույն Սակագներով չսահմանված ծառայությունների մատուցումն իրականացվում է պայմանագրային սկզբունքով:
5. Հաշիվների սպասարկման շրջանակներում նախատեսված վճարները 3 ամիս անընդմեջ չվճարելու դեպքում Բանկն իրավասու է սառեցնել հաճախորդի բոլոր հաշիվները: Հաշիվների ապաստանեցումն իրականացվում է ավտոմատ կերպով, երբ հաշիվների համալրման արդյունքում ամբողջությամբ մարվում են սակագներով նախատեսված հաշիվների ամսական սպասարկման վճարների մասով կուտակված պարտավորությունը:
6. Եթե Հաճախորդի հաշիվներով մեկ օրացուցային տարվա ընթացքում որևէ գործառնություն չի իրականացվել, ապա Բանկն իրավասու է միակողմանիորեն փակել հաճախորդի հաշիվները, առանց Հաճախորդին նախապես տեղեկացնելու:
7. 3,000,000 (երեք միլիոն) ՀՀ դրամը կամ համարժեք արտարժույթը գերազանցող կանխիկ տրամադրումն իրականացվում է նախօրոք ներկայացված հայտի հիման վրա, որը Բանկին ներկայացվում է առվազն մեկ օր առաջ՝ մինչև ժամը 14:45-ը: Առանց նախնական պատվերի երեք միլիոն ՀՀ դրամից ավելի գումարների տրամադրումը Բանկի կողմից կարող է մերժվել կամ բավարարվել՝ նշված գումարը գերազանցող գումարի 0.5% չափով կանխիկ գումարի ելքագրման լրացուցիչ սակագին գանձելու իրավունքով:
8. Սույն Սակագներով նախատեսված ներբանկային փոխանցումները փաստացի կատարվում են վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրը, իսկ միջբանկային փոխանցումները փաստացի կատարվում են (փոխանցվող գումարը Բանկի կողմից ուղարկվում է միջնորդ կամ շահառուի բանկ)՝
❖ վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրը, եթե

- ▼ Թղթային հանձնարարականը ներկայացվել է մինչև 13:00-ն,
 - ▼ Ջեռակառավարման համակարգերով հանձնարարականը ներկայացվել է մինչև 14:00-ն:
 - ✎ վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրվան հաջորդող գործառնական օրը (բացառություն են կազմում «Շտապ», հանձնարարականները, որոնք ընդունվում են մինչև տվյալ գործառնական օրվա ժամը 15:00-ն և կատարվում են նույն գործառնական օրը)²⁰, եթե
 - ▼ Թղթային հանձնարարականը ներկայացվել է 13:00-ից հետո,
 - ▼ Ջեռակառավարման համակարգով հանձնարարականը ներկայացվել է 14:00-ից հետո:
 - ✎ վճարման հանձնարարականը Բանկի կողմից ընդունելու օրվան հաջորդող գործառնական օրը՝ միջբանկային փոխանցումների հանձնարարականը շաբաթ օրը ներկայացնելու դեպքում:
9. Այն միջնորդավճարները, որոնք ենթակա են ԱԱՀ-ով հարկման, ներառում են նաև ԱԱՀ-ն:
10. Դրամական միջոցների մուտքագրումը Հաշվին իրականացվում է նույն օրվա ընթացքում, եթե հաճախորդի հետ կնքված պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
11. Ընթացիկ հաշվի ամսական սպասարկման վճարը սկսում է հաշվարկվել հաշիվը բացելու հաջորդ օրացույցային ամսվա սկզբից, իսկ գանձումն իրականացվում է հաշիվը բացելու հաջորդ ամսվա մինչև ամսի 21-ը, եթե այլ բան նախատեսված չէ Հաճախորդի և Բանկի միջև կնքված այլ պայմանագրերով:

²⁰ ԿԲ թղթակցային հաշվով կատարվող փոխանցումները Բանկի հետ համաձայնեցմամբ